ՈՒՐԱՐՏՈՒ ՈՐՄՆԱԴԻՐ ՕԹՅԱԿԻ ՀՈԶԱԿԱԳԻՐԸ

Սա՝ հայկական ծագում և համապարփակ գաղափարախոսություն ունեցող, որմնադիր օթյակ է:

ՈՒրարտու օթյակը բնապաշտ է,պատշաճորեն կազմված, հարգալից է հնագույն կարգի սահմանադրություններին, ինչով էլ պայմանավորված է նրա հոգևորությունը:

Այն լինելով գաղտնապահ(հերմետիստ), ընդունում է որպես անսասան տեղեկատվական աղբյուր Կորպուս Հերմետիկում գիրքը: Ազնվական է և գիտահետազոտական, քանի որ գիտության և գիտակցության հետազոտությունները նուսումնասիրությունները ապահովում են բարձրակարգ գիտելիքներ: ՈՒսումնասիրում ենք բնությունը որպես ճակատագիր և դավանում ենք որպես որոնման կարևորագույն համակարգ գտնել սիրո մեջ իմաստությունը, գերագույն իմաստությունը սիրո:

Ուրարտու օթյակը ոգեշնչվում է իր ամենագեղեցիկ խորհրդանիշ զինանշանով: Արծիվն ու առյուծը՝ որոնք հսկում են չորս Տաու-ից բաղկացած խաչը, բնութագրում է օթյակի ուժն ու խոյանքը: Հետևողականությունը և ինքնատիպությունը հանդիսանում են ՈՒրարտուի երկու հիմնական սյուները, որոնք նպաստում են գիտելիքներ հետապնդելու ամրարմանը:

Ինչպես հայտնի է որմնադրական կարգը ունի իր խորհրդանշական անբաժիր ծառը՝ակացիան, մենք՝ ՈՒրարտուի եղբայրներս էլ ունենք մեր խորհրդանշական ծառը, կտտկենին (սաուկո), որի մասին Գուստավ Մեյրինքը իր ,Սպիտակ Դոմինիկը՝ աշխատանքում սահմանել է հետևյալը., Սա այն ծառն է, որին դրախտում կոչում էին կենաց ծառ ու դեռ ասում են, որ ունի մոգական լիազորություն: Կտրիր նրա ճյուղերը, բունը, արմատները, թաղիր հակառակ նրանց հողի մեջ և ահա կվերածվի այն բունը արմատի ու արմատը այն կվերածվի բնի: Այդպիսին է ահա, երկու եղբոր յուրաքանչյուր բջջի մտերմությունը: Սա է նաև ՈՒրարտուի գաղափարային կառուցվածքը՝ պատիվ և արժանապատվություն, ինչը որ հետապնդում է իր իսկ զինանշանը:

Բռունցքը սրտին սեղմած եղբայրական ողջույնը հռոմեականն է, խորհրդանշում է ուժ և սեր, որը պարտական ենք օթյակին:

ՈՒրարտուն այն օթյակն է՝ որը գաղտնապահության (հերմետիզմի) մեջ կարողանում է գտնել համակողմանի մի ուղղի, որտեղ ներդաշնակորեն համընթաց են գիտությունն ու գիտակցությունը, բարոյության ու բարոյագիտության ձևավորման ներքո կարողանում է կոփել յուրաքանչյուր գիտելիք, հաշտեցնել խնդիրը՝ գաղտնի իմաստության, գիտության զարգացումների և արժանապատվությամբ հիմնված մի կենսակերպի միջև, որն ընծայում է առաքինություն կիրառելու գիտելիքներ:

Ձևնելով մեր ակունքները հնարավոր է տեսնել հակասության մեջ մեկ միասնություն, մենք անընդհատ մերող կապն ենք մեր հայկական ծագման և որմնադրական ունիվերսալիզմի քարոզման միջև: Հիմնական նախադրյալը որին մենք հետամուտ ենք՝ դա իմաստության որոնումն է հոգու բերկրանքի համար: Լինել ուրարտացի նշանակում է լինել յուրաքանչյուրիս

ներաշխարհի և այնտեղ գտնվող երկնայինի շինարարը, այդ իսկ պատճառով էլ մեր որոնումներում միաբանում ենք գիտականն ու առեղծվածայինը, խորհում ենք որ արտաքին տարածքի նվաճումը միաժամանակ ներքին տարածքի հաղթանակն է:

Վարինը նույնն է ինչ վերինը, հնագույն գաղտնապահ(հերմետիկ) փիլիսոփայությունը վերածնվում է ծայրահեղ արդիականության մեջ, բավական է ունենալ բավարար հոգեւոր զգայունություն այս վերածնունդը ըմբռնելու համար, գիտությունը դառնում է կրկին Գնոսիս(գերազանց գիտություն, գերիմաստություն):

Մենք հավատում ենք որ կարող ենք լինել հոգևորական և միաժամանակ կողմնակցել առաջխաղացմանը, գիտելիքներին և տեխնիկային: Այնպես որ, մենք ձգտում ենք Պրոմեթևսյան մի ճանապարհ չակնկալելով ոչինչ եթե չբխի ինքներս մեզնից: Հաշվի առնենք անգնահատելի մի մանրուք, հին մարդը մտածում էր, որ հոգին նախադրյալ չէ, այլ ձեռք է բերվում առաքինությունը իրականացնելիս: Հին մարդը իրավացի էր, ինչպես չկա սեր առանց սիրո պատրաստակամության, այնպես էլ չկա մտավոր ուղեցույց առանց դրա պատրաստակամության:

Մենք բոլորս էլ ունենք մեկ հացահատիկ հոգի, սակայն ոչ բոլորն են գոյացնում այն, քիչ են այն մարդիք ում համար այդ հացահատիկն արարելն ամեն ինչ է: Հոգևոր մարդիք հավերժության արհեստավորներ են:

Հին մարդը առաջնային էր համարում քաղաքացիական առաքինությունները, կամքի ուժով և ունակությամբ ձեռք բերել իր մեջ ինչ-որ բան, որ արժանանա մեր սեփական գաղտնիքին: Ազնվական գաղտնապահություն, ասենք թե այն առեղծվածայինը, անհասանելին և անկործանելին, մի խոսքով Որակ:

Ուրարտուում փայլուն սահմանված են սրբության և իմաստության խորհուրդները, քանի որ նրանք տարբեր են: Նաև հետաքրքրվում ենք առեղծվածային իրավիճակներով, որովհետև բացահայտում են մարմնում եղած հոգու ակնհայտ արդյունքները:

Համոզված ենք որ առեղծվածային իրավիճակում գտնվող սուր բնախոսությունը(ֆիզիոլոգիան) կօգնի բացահայտել մարդու ուղեղի հնարավորությունները և ըմբռնում ենք այն որպես տիեզերքի նախանմուշ, քանի որ ընդգրկում է իր մեջ ամենայն ճանաչելին:

Մարդաբանության, կենսաբանության եւ աստղաֆիզիկայի առավել ակնհայտ ապացույցը կտրուկ զարգացումն է: Հատկանշական է փաստել, որ մեր ժամանակակցի տեսադաշտը ամեն անգամ ավելի սեղմ է, մինչ դեռ մարդկության աչքը օրեցօր ընկալում է ավելի ընդարձակ:

Մէնք՝ ՈՒրարտացիներս, ջատագովում էնք ազնվականությունը (արիստոկրացիան) բառի բուն և ամբողջական իմաստով: ձգտում ենք լինել ազատության մեջ լավագույնը և այդ առումով ըմբռնում էնք ազնվականության (արիստոկրացիայի) սահմանումը Բլանկ դե Սահնտ-Բոնեետի վսեմ խոսքերով.,Պատճառ հանդիսացող այդ կարողությունը և այդ վաստակի իշխանությունը ազատությունն էե:

Ազնվականության իմաստը տարբերության առումով է, որտեղ ուզում ենք նկատել անձանց զանազանելու ունակությունը իրենց արժեքների բազմազանությամբ և անհավասարությամբ:

Ազնվական է նա՝ ով առաջնորդվում է մարդկային որակների որոշակի պատկերացմամբ, ով տոնում է գեղեցկությունը, ուժը, եռանդը, կամքը և ինքը զինքը կայանալու կարողությամբ կարող է կյանքի հետ համաձայնել խաղաղություն և սահմանել տիեզերքի հետ տիրույթի դաշինք:

Բոլոր եղբայրներին փորձում ենք սերմանել կատարյալը՝,մտքի ազատությունը ամենահպարտ ազնվականությունն է:

ԵՎ ահա այս դեպքում իմաստությունն է մեր միակ թույլատրելի եսասիրությունը, քանի որ մարդու իմացության աստիճանը պայմանավորված է իր էության աստիճանի հետ:

Վերցնել ազնվականությունը որպես նմուշ ընդօրինակելու համար, նշանակում է ունենալ ներքին քաղաքակրթություն, այս է մեր գաղտնապահության(հերմետիզմի) և որպես այդպիսին հպարտորեն սահմանված լինելու պատճառը: Մեր հանձնարարությունն է. Որոնել ճշմարտությունը որպես գործողության ուղեցույց կամ կանոնակարգ, ինչպես ուղղիչ և հարիր չափանիշ, որն ճանաչվելուն պես իբրև կատարյալ ոգեշնչող՝ օգտակար և արդյունավետ գործունեության մեջ, կվերածվի արժանապատիվ աշխատանքի, միաժամանակ գոհացնելով սիրտն ու միտքը:

Ահա մեր էությունը ինչպես ուրարտացիներ և ինչպես նախաձեռնողական փիլիսոփայություն, որը ձեռք է բերվում և կիրառվում է զարգանալու համար, զտել և ազնվացնել գործողությունը հավելելով առաքինություն և իշխանություն:

Մենք միավորված ենք գիտելիքների արժանավայելչությամբ, հույսով ենք լինել արժանապատվության օրինակ և գաղտնապահ (հերմետիկ) իմաստության բավարար օջախ:

Հստակեցնել, պարզեցնել եւ հարստացնել հետազոտությունը մեր գործն է, քանի որ ազատ ոգին էական իրականության մեջ գնում է բնական ճանապարհով, կարծում ենք, որ մարդը կարող է լինել այս կամ այն, սակայն ամենից առաջ առկա է իր կատարելության և իր թերությունների երկխոսությունը: Սա է այն մաքրամաքուրը, որ մեզ տալիս է ՈՒրարտուն:

Աշխարհիկ մարդը կայացած մարդ չէ: Ավելին չէ, քան մահկանացու սերմ, որը կքարշվի եթե չգտնի համապատասխան հող գոյանալու համար:

Հերմենևտիկ ուսումնասիրության, ինչպես նաև բարձր գիտության միջոցով՝ որին վատ անվանում են մագիա, մտնում ենք մտքերի արմատները և խորհրդանիշների(սիմվոլիզմի) միջոցով ուսումնասիրում ենք համաբանական(անալոգիա) մտածողության համակարգերը(մեխանիզմները), որպես վերլուծության և համադրության(սինթեզի) այլընտրանք: Գերադասում ենք բանականությունը առեղծվածից և ենթադրությունը հավատքից:

Ուրարտական հերմետիզմը ունի բնօրինակ տեսլական: Միաժամանակ հստակ և գիտական պայմաններում զարգացած այս տեսլականն ունի ամուր փիլիսոփայական համակարգ, խիստ միահյուսված մի հոգեբանություն, տիեզերագիտություն, բարոյագիտություն և գեղագիտություն, որն իր արեւմտյան արտահայտությամբ առաջարկում է նոր կարգ հիմնված զարգացող(էվոլյուցիոն) հեղափոխության վրա:

Հետեւաբար ուրարտացին գիտակցում է, որ

մեծ Ճարտարապետը չի գտնվում տիեզերքի նյութական կամ հոգեկան որևէ կետում: Նրան հասնելու համար չկա վերելքի որևէ հատուկ միջոց, սակայն վերելքի գաղափարը կարող է հանդիսանալ անհրաժեշտ խթան, որոնման արդյունավետ հիմք: Սա է ՈՒրարտուի Էզոթերիզմի Ճանապարհը:

Իսկական էզոթերիստները ,ոգևորվածե կիսամասոններ չեն, այլ անտեսանելիի ճարտարագետներ, ֆիզիկոսներ եւ քիմիկոսներ:

ԵՎ հարկ է հակիրճ բացատրությամբ ներկայացնել ՈՒրարտուի խորհրդանիշի էությունն ու տեսակը:

Սկսենք բացատրելով, որ խաչի վրա ցուցանշված կենդանակերպը սկսվում է Առյուծով: Առյուծի համաստեղության ամենապայծառ աստղը Ռեգուլուսն է, որը գալիս է լատիներենից(Արքա): Հնդկաստանում այն հայտնի էր որպես ամենակարող, իսկ Պարսկաստանում ինչպես կենտրոնական աստղ:

Ռեգուլուսը հայտնի է որպես չորս թագավորական աստղերից մեկը, Ալդեբարանի (Ցլի համաստեղություն), Փոմալհաուտի (Ձրհոսի համաստեղություն) և Անտարեսի (Կարիճի համաստեղություն) հետ միասին:

Այս չորս աստղերը համարվում են երկնքի խնամակալները, ձեւավորելով ֆիքսված խաչը հսկում են մնացած բլոր աստղերը, որը դրսեվորված է մեր մեջ կենտրոնախույս եւ կենտրոնաձիգ կրկնակի արևխաչով(սվաստիկայով): Բոլորս գիտենք չորս տարրերը՝ հողը, ջուրը, օդը և կրակը կամ չորս նյութային վիճակներ, որոնք կազմում են այս խաչը: Չորս նյութային վիճակներ երեք չափի մեջ. առանցքային(կարդինալ), հիմնական և հեղհեղուկ: Ծարժման երեք տատանումներ, հետևաբար չորս անգամ երեք՝ տասներկու:

Մի կարևոր տեղեկություն, որ տարբերում է մեզ այլ էզոթերիկ դպրոցներից, հակառակ աստվածաշնչյան առատ հայտարարությունների, աստղաբանական մտքի ընդհանրության մեջ էներգիան ներթափանցում է կենդանակերպի հաստատագրված նշաններով, ավելի ճշգրտորեն՝ Առյուծի կենդանակերպով, այսինքն փուլը սկսվում է Առյուծի և ոչ թե այդքան հաճախ նշված Խոյի կենդանակերպով:

Այս նախադրյալից սկսած իմաստավորվում են նախնիների կողմից նշանակված հատկանիշները և մեր կողմից հատկանշած Ռեգուլուսը, մէծն Միակի արտացոլանքը, թագավորական նշանի սիրտը և Ռեգուլուսն է թագավորը, ուր բընավորվում է ընդհանրական(ունիվերսալ) հոգու մասնիկը:

Այդ իսկ պատճառով էլ ՈՒրարտուի եղբայրներս ընդունում էնք իր նշանապաշտությունը, ընդմիշտ պաշտպանված արծվով և առյուծով, հոգու խոյանքի ու երկրային ուժի խորհրդանիշները և համոզված ենք, որ ոչ շատ հեռավոր ապագայում կեղբայրանանք ազնվականությամբ, կապակցվածությամբ և յուրօրինակությամբ, արմատական այն հիմքը, որ մեզ տալիս է իմաստ և վեհության կարողություն: